<<ՀԱՍՏԱՏՎԱԾ Է>>

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի 29.04.2019թ. թիվ 4 նիստում:
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի
գիտական խորհրդի նախագահ,
ոստիկանության գեներալ-մայոր
Մ.Բաբայան
<<_____>>_____2019թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Երևան-2019

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրը (այսուհետ՝ Կրթահամալիր), լինելով ՀՀ միակ ոստիկանական բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի գործունեության առանցքային բաղադրիչն է հանդիսանում գիտահետազոտական աշխատանքների իրականացումը:

Առաջիկա տարիներին Կրթահամալիրի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը բուհի հետազոտական հատկանիշների զարգացումն է, ինչը ենթադրում է հետազոտական բաղադրիչի լիարժեք ներմուծումն ու զարգացումը մասնագիտական կրթության բոլոր աստիճաններում, Կրթահամալիրի գիտական ներուժի կայուն զարգացումն ու արդյունավետ օգտագործումը, հետազոտական ծրագրերի արդյունավետության բարձրացումն ու ինովացիոն կողմնորոշումը, գիտատեխնոլոգիական ենթակառուցվածքների նպատակային օգտագործումն ու նորերի ստեղծումը, Կրթահամալիրի հետ համագործակցող ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ փոխշահավետ կապերի ստեղծումն ու համատեղ հետազոտությունների կատարումը, Կրթահամալիրում իրականացվող հետազոտությունների ու ինովացիոն մշակումների պատշաճ հրապարակայնացումը և դրանց ներկայացումը միջազգային շտեմարաններում, հետազոտական ու նորարական արդյունքների ներդրումը ինչպես արտադրությունում, այնպես էլ կրթական գործընթացում:

Կրթահամալիրի գիտական ներուժի արդյունավետ օգտագործման և հետագա զարգացման տեսանկյունից կարևորագույն նշանակություն ունի ինչպես Կրթահամալիրի դասախոսների առավելագույն ներգրավվածությունը հետազոտական և նորարարական աշխատանքներում, այնպես էլ գիտական նոր կադրերի նպատակային պատրաստման գործընթացը: Վերջին խնդրի լուծման արդյունավետ ճանապարհներից է նաև Կրթահամալիրի ասպիրանտուրան:

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կրթահամալիրի գիտահետազոտական ոլորտի ռազմավարական ուղենիշները արտացոլվում են Կրթահամալիրի տարբեր ռազմավարական պլաններում: Այս ոլորտի զարգացման տեսլականը դիտարկվում է հետևյալ աշխատանքների իրականացման մեջ.

- Գիտամանկավարժական նոր կադրեր պատրաստելու նպատակով, անհրաժեշտ է հնարավորինս ընդլայնել Կրթահամալիրի ասպիրանտների քանակը՝ ստեղծելով Կրթահամալիրը նոր գիտնականներով համալրելու հեռանկար:
- Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և սովորողների հետազոտական աշխատանքների ծավալները մեծացնելու համար անհրաժեշտ է նախատեսել նոր խրախուսման մեթոդներ և ընթացակարգեր, մասնավորապես դրամական խրախուսանքների սահմանում, «Լավագույն սովորող» միջոցառման իրականացում, որտեղ պարտադիր մաս պետք է հանդիսանա հետազոտական բաղադրիչը:
- Միջազգային գիտական միջոցառումների կազմակերպում, համատեղ հետազոտական աշխատանքների իրականացում արտասահմանյան ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ:
- Սովորողների հնարավորինս ընդգրկում Կրթահամալիրում գործող գիտական խմբակների կազմում:

- Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և սովորողների հեղինակած գիտական հոդվածների պարբերաբար ընդգրկում «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրի մեջ:
- Դասախոսական անձնակազմի և սովորողների համատեղ գիտական միջոցառումների կազմակերպման և հրատարակչությունների իրականացման խրախուսում:
- Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ուղղությամբ միջոցառումների նախատեսում և իրականացում:

Կրթահամալիրի գիտական ներուժի տեսլականի իրականացումը 2019-2023թթ. Դիտարկվում է հետևյալ խնդիրների լուծման միջոցով.

Խնդիր 1. Նպաստել կրթահամալիրի հետազոտական աշխատանքների քանակի ավելացմանը և պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ ներգրավվածությանը գիտական ծրագրերում.

Իրականացվող քայլեր

1.1 Պարբերաբար խրախուսել Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից գիտահետազոտական աշխատանքների կատարումը,

1.2 «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրում կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և սովորողների գիտական հոդվածների պարբերաբար ընդգրկում,

1.3 Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներգրավել արտասահմանյան գործընկեր բուհերի կողմից կազմակերպվող գիտական միջոցառումներին,

1.4 Տեխնիկական հնարավորություններ ստեղծել ներպետական և արտասահմանյան գործընկեր բուհերի հետ տեսակոնֆերանսներ կազմակերպելու համար,

1.5 Արտասահմանյան գործընկեր բուհերի ներկայացուցիչների հետ համատեղ հետազոտություններ իրականացնելու հնարավորություններ ստեղծել:

Խնդիր 2. Նպաստել հետազոտական նախաձեռնություններում կրթահամալիրի սովորողների ներգրավվածության մեծացմանը.

Իրականացվող քայլեր

2.1 Խրախուսել սովորողների մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներում,

2.2 Ապահովել սովորողների և դասախոսների համատեղ մասնակցությունը հետազոտական նախագծերում,

2.3 Գիտական խմբակների ուսումնասիրության թեմաները համապատասխանեցնել ՀՀ ոստիկանությանը առնչվող հիմնախնդիրներին,

2.4 Ապահովել սովորողների կողմից հեղինակած գիտական հոդվածների տպագրությունը,

2.5 Պարբերաբար կազմակերպել սովորողների մասնակցությամբ ներբուհական գիտական միջոցառումներ,

2.6 Իրականացնել «Լավագույն սովորող» մրցույթ գնահատման առարկա դարձնելով սովորողի կատարած գիտահետազոտական աշխատանքը:

Խնդիր 3. Հետբուհական կրթության կատարելագործում.

Իրականացվող քայլեր

3.1 Համակարգել ասպիրանտների կողմից պարտադիր և ընտրովի դասընթացների իրականացումը կրթահամալիրում,

3.2 Ներգրավել ասպիրանտներին կրթահամալիրում իրականացվող տարբեր գիտական միջոցառումներին,

3.3 Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմը համալրել ասպիրանտուրան հաջողությամբ ավարտած շրջանավարտներով,

3.4 Աջակցել ասպիրանտներին իրենց հեղինակած գիտական հոդվածների տպագրության հարցում:

Խնդիր 4. Ընդլայնել հետազոտական բաղադրիչը միջազգային համագործակցության մեջ.

Իրականացվող քայլեր

4.1 Ստեղծել համապատասխան միջազգային միջավայր հրավիրված մասնագետների կողմից դասախոսությունների անցկացման, աշխատանքային հանդիպումների կազմակերպման միջոցով,

4.2 Կազմակերպել միջազգային կոնֆերանսներ, խրախուսել պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների մասնակցությունը միջազգային կոնֆերանսներին և այլ հետազոտական ծրագրերին,

4.3 Աջակցել Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հեղինակած գիտական հոդվածների հրապարակման գործընթացին միջազգայնորեն ճանաչված պարբերականներում (SCOPUS, РИНЦ և այլն),

4.4 Կրթահամալիրի ուսումնական ստորաբաժանումներին պարբերաբար իրազեկել արտասահմանյան գործընկեր բուհերի կողմից կազմակերպվելիք գիտական միջոցառումների հրավերների և վերջիններիս գիտական պարբերականներում տպագրվելու հնարավորությունների մասին:

Խնդիր 1. Նպաստել կրթահամալիրի հետազոտական աշխատանքների քանակի ավելացմանը և պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ ներգրավվածությանը գիտական ծրագրերում.

N	Քայլեր	Կատարման ժամանակահատված					Պատասխանատու ստորաբաժանում	Անհրաժեշտ ռեսուրսներ /մարդկային, նյութական, ֆինանսական/	Վերջնարդյունք	Գործունեության առանցքային ցուցիչ/ԳԱՑ/
		2019	2020	2021	2022	2023				
1	2	3					4	5	6	7
1.1.	Պարբերաբար խրախուսել Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից գիտահետազոտական աշխատանքների կատարումը,						Գիտական աշխատանքների բաժին, Ֆինանսական ծառայություն	Տեսչական կազմ, Կրթահամալիրի բյուջե	Գիտահետազոտական աշխատանքների խրախուսման մեխանիզմների առկայություն	Գիտահետազոտական աշխատանքների խրախուսման ցուցանիշների առկայություն
1.2.	«Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագրում կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և սովորողների գիտական հոդվածների պարբերաբար ընդգրկում						Գիտական աշխատանքների բաժին, ամբիոններ	Պրոֆեսորադասախոսական կազմ, սովորողներ	Հրատարակված գիտական հոդվածներ	Գիտական աշխատանքների բաժնի տարեվերջյան հաշվետվություն
1.3.	Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներգրավել արտասահմանյան գործընկեր բուհերի կողմից կազմակերպվող գիտական միջոցառումներին						Գիտական աշխատանքների բաժին, միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժին, ամբիոններ, ֆինանսական ծառայություն	Պրոֆեսորադասախոսական կազմ, Կրթահամալիրի բյուջե	Մասնակցություն գործընկեր բուհերի կողմից կազմակերպվող գիտական միջոցառումներին	Գիտական աշխատանքների բաժնի տարեվերջյան հաշվետվություն

1.4.	Տեխնիկական հնարավորություններ ստեղծել ներպետական և արտասահմանյան գործընկեր բուհերի հետ տեսակոնֆերանսներ կազմակերպելու համար						Ֆինանսական ծառայություն, տնտեսական բաժին	Կրթահամալիրի բյուջե	տեսակոնֆերանսներ կազմակերպելու համար համապատասխան կահավորում և տեխնիկային առկայություն	Իրականացված տեսակոնֆերանսներ
1.5.	Արտասահմանյան գործընկեր բուհերի ներկայացուցիչների հետ համատեղ հետազոտություններ իրականացնելու հնարավորություններ ստեղծել						Գիտական աշխատանքների բաժին, միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժին, ամբիոններ	Պրոֆեսորադասախոսական կազմ,	Իրականացված հետազոտությունների վերջնարդյունք	Մասնակցության ցուցանիշների առկայություն

Խնդիր 2. Նպաստել հետազոտական նախաձեռնություններում կրթահամալիրի սովորողների ներգրավվածության մեծացմանը.

N	**Քայլեր**	**Կատարման ժամանակահատված**					**Պատասխանատու ստորաբաժանում**	**Անհրաժեշտ ռեսուրսներ /մարդկային, նյութական, ֆինանսական/**	**Վերջնարդյունք**	**Գործունեության առանցքային ցուցիչ/ԳԱՑ/**
		2019	**2020**	**2021**	**2022**	**2023**				
1	**2**	**3**					**4**	**5**	**6**	**7**
2.1.	Խրախուսել սովորողների մասնակցությունը հանրապետական և միջազգային գիտաժողովներում						Գիտական աշխատանքների բաժին, միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժին, ֆակուլտետներ ֆինանսական ծառայություն	Պրոֆեսորադասախոսական կազմ, սովորողներ, Կրթահամալիրի բյուջե	սովորողների մասնակցություն հանրապետական և միջազգային գիտաժողովներում	Գիտական աշխատանքների բաժնի տարեվերջյան հաշվետվություն
2.2.	Ապահովել սովորողների և դասախոսների համատեղ մասնակցությունը հետազոտական նախագծերում						Գիտական աշխատանքների բաժին, ֆակուլտետներ	Պրոֆեսորադասախոսական կազմ, սովորողներ	Համատեղ իրականացված նախագծեր և հրատարակչություններ	Գիտական աշխատանքների բաժնի տարեվերջյան հաշվետվություն

									ր	
2.3.	Գիտական խմբակների ուսումնասիրության թեմաները համապատասխանեցնել ՀՀ ոստիկանությանը առնչվող հիմնախնդիրներին						Գիտական աշխատանքների բաժին, գիտական խմբակների ղեկավարներ	Պրոֆեսորադասախոսական կազմ, սովորողներ	Գիտական խմբակների պլանների արդիականացում	Հաստատված պլան
2.4.	Ապահովել սովորողների կողմից հեղինակած գիտական հոդվածների տպագրությունը						Գիտական աշխատանքների բաժին, ամբիոններ	Պրոֆեսորադասախոսական կազմ, սովորողներ	սովորողների կողմից հեղինակած գիտական հոդվածների առկայություն	Գիտական աշխատանքների բաժնի տարեվերջյան հաշվետվություն
2.5.	Պարբերաբար կազմակերպել սովորողների մասնակցությամբ ներբուհական գիտական միջոցառումներ						գիտական խմբակների ղեկավարներ, ամբիոններ, գիտական աշխատանքների բաժին,	Պրոֆեսորադասախոսական կազմ, սովորողներ	ներբուհական գիտական միջոցառումներին սովորողների մասնակցություն	Գիտական աշխատանքների բաժնի տարեվերջյան հաշվետվություն
2.6.	Իրականացնել «Լավագույն սովորող» մրցույթ գնահատման առարկա դարձնելով սովորողի կատարած գիտահետազոտական աշխատանքը						Ուսումնամեթոդական վարչություն, որակի բաժանմունք, Ֆակուլտետներ	Մրցութային հանձնաժողով, սովորողներ	«Լավագույն սովորող» մրցույթի կազմակերպում և անցկացում	«Լավագույն սովորող» մրցույթի հաղթողների առկայություն

Խնդիր 3. Հետբուհական կրթության կատարելագործում.

N	Քայլեր	Կատարման ժամանակահատված					Պատասխանատու ստորաբաժանում	Անհրաժեշտ ռեսուրսներ /մարդկային, նյութական, ֆինանսական/	Վերջնարդյունք	Գործունեության առանցքային ցուցիչ/ԳԱՑ/
		2019	2020	2021	2022	2023				
1	2	3					4	5	6	7
3.1.	Համակարգել ասպիրանտների կողմից պարտադիր և ընտրովի դասընթացների իրականացումը կրթահամալիրում						Գիտական աշխատանքների բաժին, ամբիոններ	Պրոֆեսորադասախոսական կազմ, ասպիրանտներ	Պարտադիր և ընտրովի դասընթացների կազմակերպում	Տեղեկագրերի առկայություն
3.2.	Ներգրավել ասպիրանտներին կրթահամալիրում իրականացվող տարբեր գիտական միջոցառումներին						Գիտական աշխատանքների բաժին, ամբիոններ	Պրոֆեսորադասախոսական կազմ, ասպիրանտներ	Կրթահամալիրում իրականացվող տարբեր գիտական միջոցառումներին ասպիրանտների մասնակցություն	Ասպիրանտների գիտական միջոցառումներին մասնակցության աճ
3.3.	Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմը համալրել ասպիրանտուրան հաջողությամբ ավարտած շրջանավարտներով						Կադրերի և ԱՀՏԱ բաժին, Ֆինանսական ծառայություն	Ասպիրանտուրայի շրջանավարտներ, Կրթահամալիրի բյուջե	Կրթահամալիրի գիտական ներուժի համալրում	Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական կազմի համալրում գիտնականներով
3.4.	Աջակցել ասպիրանտներին իրենց հեղինակած գիտական հոդվածների տպագրության հարցում						Գիտական աշխատանքների բաժին, ամբիոններ	Ասպիրանտներ, Տեսչական կազմ	Տպագրված գիտական հոդվածների առկայություն	Գիտական աշխատանքների բաժնի տարեվերջյան հաշվետվություն

Խնդիր 4. Ընդլայնել հետազոտական բաղադրիչը միջազգային համագործակցության մեջ.

N	Քայլեր	Կատարման ժամանակահատված					Պատասխանատու ստորաբաժանում	Անհրաժեշտ ռեսուրսներ /մարդկային, նյութական, ֆինանսական/	Վերջնարդյունք	Գործունեության առանցքային ցուցիչ/ԳԱՑ/
		2019	2020	2021	2022	2023				
1	2	3					4	5	6	7
4.1.	Ստեղծել համապատասխան միջազգային միջավայր հրավիրված մասնագետների կողմից դասախոսությունների անցկացման, աշխատանքային հանդիպումների կազմակերպման միջոցով						Միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժին, գիտական աշխատանքների բաժին,	Տեսչական կազմ	Միջազգային համագործակցության և միջազգայնացման հստակ պլանի առկայություն	Կատարված աշխատանքների հաշվետվություններ և մակարդակի բարձրացում 20%-ով
4.2.	Կազմակերպել միջազգային կոնֆերանսներ, խրախուսել պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների մասնակցությունը միջազգային կոնֆերանսներին և այլ հետազոտական ծրագրերին						Գիտական աշխատանքների բաժին, միջազգային համագործակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման բաժին, ֆինանսական ծառայություն	Բաժնի պետեր, տեսչական կազմ, Կրթահամալիրի բյուջե	Միջազգային կոնֆերանսների կազմակերպում և իրականացում	Գիտական աշխատանքների բաժնի տարեվերջյան հաշվետվություն
4.3.	Աջակցել Կրթահամալիրի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հեղինակած գիտական հոդվածների հրապարակման գործընթացին միջազգայնորեն ճանաչված պարբերականներում (SCOPUS, РИНЦ և այլն),						Ուսումնամեթոդական և զարգացման վարչություն, գիտական աշխատանքների բաժին, ակադեմիա, քոլեջ, ֆինանսական բաժին	Բաժնի պետեր, տեսչական կազմ	Հրապարակված հետազոտությունների առկայություն	Գիտական աշխատանքների բաժնի տարեվերջյան հաշվետվություն
4.4.	Կրթահամալիրի ուսումնական ստորաբաժանումներին պարբերաբար իրազեկել արտասահմանյան գործընկեր բուհերի կողմից						Ուսումնամեթոդական և զարգացման վարչություն, գիտական աշխատանքների բաժին	Համապատասխան մասնագետներ և տեսչական կազմ	Հետազոտական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության ապահովում և	Գիտական աշխատանքների բաժնի տարեվերջյան հաշվետվություն

	կազմակերպվելիք գիտական միջոցառումների հրավերների և վերջիններիս գիտական պարբերականներում տպագրվելու հնարավորությունների մասին								միջազգային պարբերականներում հետազոտական աշխատանքների հրապարակում	